ԿԵՍԱՐԱՀԱՅ ԿԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(ԺԷ-ԺԸ դարեր)

Մաշտոցի անվան Մատենադարանի հարուստ հավաքածուի հիմքի վրա՝ հայերեն ձեռագրերի մակագրություն ունեցող կազմերի հետազոտության մեր ծրագրի շրջանակներում ուշադրություն գրավեց ԺԷ դարի երկրորդ կեսին և ԺԸ դարի առաջին կեսին Կեսարիայում ստեղծված արծաթե կրկնակազմերի ուշագրավ փաստը: Այս կամ այն ձեռագիրը նկարագրելու կամ ձեռքն ընկած նյութը ներկայացնելու առիթով անցյալի և ներկայի հայագետներն արծարծել են այս խնդրին վերաբերող հուշարձաններ, որոնց առաջին ամփոփումը Հ. Գյուրտյանի «Կեսարիոյ ռուկերչական դպրոցին արծաթ կազմերը. ԺԷ դ.» ուսումնասիրությունն[1] է, իսկ երկրորդը՝ ներկա հոդվածը, որ ներառնում է նաև 1950-ական թվականներից հետո շրջանառության մեջ դրված և Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուից մեր հայտնաբերած՝ առաջին անգամ հրապարակվող փաստերը:

Կեսարահայ կազմարվեստի դրվագները ներկայացնում ենք ժամանակագրական կարգով. ամեն անգամ բերելով և քննելով նույն հուշարձանին վերաբերող նկարագրական և մեկնաբանական տարրերը, ընդհանուր աղբյուրագիտական-բանասիրական ամփոփումը թողնում ենք հոդվածիս վերջին:

1. Պրինստոն համալսարանի (Նյու Ջերսի, ԱՄՆ) Robert Garrett հավաքածուի ձեռագիր N° 20. Ժամագիրք, ԺԷ[2] դ., 203 թերթ, թուղթ, 9×7×4 սմ մեծության, բոլորգիր, 13 տող, արծաթագործ՝ «Ծահմիրին Մ. Կարապետ», 1653 թ. «ի Կեսարիա»: Ա փեղկին քանդակված է Հիսուսի Ծնունդը. վերևում հրեշտակներ են, աջ կողմում՝ Մարիամ, Հովսեփ և երկու այլ մարդ, կենտրոնում՝ մանուկ Հիսուսը մսուրի մեջ և երկու կենդանի: Բ փեղկին Սուրբ Երրորդությունն է: Թիկունքին ունի հետևյալ արձանագրությունը. «Ժամագիրքս այս արեալ հալալ ընչիս իր զարթարեցի արգաբաւ Կէսարիա քաղաքին անարժան Շէռօք արգաթագործ Ծահմիրին Մ. Կարապետ. թիւն ՌՄԲ (1653)»[3]:

---

[1] Հ. Գյուրտյան, Կեսարիոյ ռուկերչական դպրոցին արծաթ կազմերը. ԺԷ դ., «Հասկ» հայագիտական տարեգիրք, Անթիլիաս-Լիբանան, 1948, էջ 51-61 (այսուհետ՝ Հ. Գյուրտյան, էջ...):

[2] Տե՛ս Զ. Ծ. Վ. Արզումանյան, Հայերեն ձեռագիրներ Հյուսիսային Ամերիկայում. Ա. Պրինստոն համալսարանի գրատան հայերեն ձեռագիրները, «Բանբեր Մատենադարանի», հ. 11, Երևան, 1973, էջ 377 (այսուհետ՝ Զ. Արզումանյան, «Բանբեր», էջ...): Ձեռագրի գրչության ժամանակը ԺԳ դ. է:

[3] Avedis K. Sanjian, A catalogue of medieval Armenian manuscripts in the United States, University of Californiapress, Berkeley - Los Angeles - London, 1976, p. 402. (այսուհետ՝ Ա. Սանջյան, էջ...), Զ. Արզումանյան, «Բանբեր», էջ 377-78, ինչպես նաև՝ Զ. Ծ. Վ. Արզումանյան, Բրինսթրն համալսարանին սայերեն ձեռագիրները, «Սիոն», Երուսաղեմ, 1971, էջ 265 (այսուհետ՝ Զ. Արզումանյան, «Սիոն», էջ...). Հ. Գյուրտյան, էջ 52, նկար 1 և 2 (արձանագրությունում Արզումանյանի մոտ կեսարիա է, Գյուրտյանի մոտ՝ արծաթաւ եւ արծաթագործ), Thomas F. Mathews and Roger S. Wieck, Treasures in Heaven (Armenian illuminated manuscripts), New York, 1994, p. 200, cat. 75, fig. 82. (այսուհետ՝ T. F. Mathews...):

2. Նյու Յորքի Pierpont Morgan Library, ձեռագիր W 7. Երգարան, 1418 թ., Երզնկայի շրջանի Կապոսի վանք, 282 թերթ, թուղթ, 11,5×8,3 սմ մեծության, միասյուն, բոլորգիր նոտագրված, 15 տող, գրիչ և ծաղկող՝ Արիստակես Սեբաստացի, արծաթագործներ՝ Կարապետ և Հակոբ, արծաթակազմ 1653 թ., Կեսարիա: Ա փեղկին երկրպագությունն է: Քահանան և եվրոպական զգեստներով մի քանի իշխանաններ ծնրադիր են, Պողոս և Պետրոս առաքյալներն իրենց հայացքն ուղղել են Քրիստոսի՝ փշե պսակի մեջ դրված մակագրությանը: Բ փեղկին երիտասարդ Քրիստոսն է՝ շրջապատված նվագող 9 հրեշտակներով: Թիկունքի արձանագրությունից տեղեկանում ենք, որ Կարապետ և Հակոբ արծաթագործները կազմը 1653 թվականին պատրաստել են Կեսարիայում: Արձանագրված արծաթե թիկունքը ծղխինիներով ամրացված է երկու փեղկերին: Սիլվի Մերյանը և Թոմաս Մաթյուսը գրում են, որ սա և շարքիս առաջին՝ Պրինստոնի համալսարանի N° 20 ձեռագրի կազմը պատրաստված են նույն տարում, հավանաբար նույն Մ. Կարապետ Շահմիրի ձեռքով և որ սրանք Կեսարիայից հասած ամենահին արծաթե կազմերն են, երկուսն էլ ունեն արևմտյան պատկերագրության մոտիվներ, որոնց ճշգրիտ աղբյուրը դեռևս պարզված չէ[4]:

3. Վենետիկի Մխիթարյան մատենադարանի ձեռ. N° 1703 (ցուցակի՝ 70). Սաղմոսարան. ԺԵ-ԺԶ դդ., 203 թերթ, 10×7,7 սմ մեծության, մագաղաթ, բոլորգիր, 17 տող, արծաթագործ՝ «Մալխասին Մ. Ցակոբ», 1656 թ. «ի Կեսարիա»: Բ. Սարգիսյանը նշում է. «Տեղի՝ անյայտ, հաւանօրէն Կեսարիայ, ուր Մ. Ցակոբ քանդակել տուեր է ետքէն մի ուրիշ գործ եւս (ընդգծումը մերն է – Ա. Մ.): Կազմող անյայտ, իսկ քանդակագործն է Մալխաս և շինել տուողն Մ. Ցակոբ: Կազմ փայտեայ կաշեպատ, որուն վրայ ետքէն, այն է ի թուականին հայ. ՌՃԴ (=1655), ագուցուած են երկնագոյն կանաչ և մոխ կապոյտ կիտուածանկարներով արծաթեայ քանդակագործ պատեանք: Առաջին կողի քանդակը կը ներկայացնէ մեզ Սամուէլ մարգարէն՝ քահանայապետական տարազով, որ կամարակապ սիւնազարդ տաճարի մը մէջ կ'օծէ զԴաւիթ թագաւոր, և շուրջանակի քահանայք և ղևտացիք, ոյք կը հարկանեն երաժշտական գործիներ: Իսկ վերջնոյն վրայ ներկայացուած է – Սիոնի մէջ – թագաւորդ մարգարէն Դաւիթ՝ ծնրադիր, որ բազկատարած կ'աղօթէ՝ արքունական ճոխ ծիրանիները յետին սփռած, և սանթուտը կոթնցուցած է սեպաձև ժայռերուն, որ ի հանդիպոջ վեր կը ծառանան: Իսկ վերև փորագրուած է, գանգուր ամպերուն վրայ, թևատարած հրեշտակ մը, որ իր աջովը բռնցեղէն սուր մը կարկառած է դէպ ի աղօթաւորն, իսկ ձախին մէջ գանկ մը պինդ բռնած է»[5]: «Արծաթաքանդակ կողերուն միջև կապոյտ կիտուածանկարին վրայ կայ ոսկեզօծեալ արծաթեայ երկաթագրով» հետևյալ

---

[4] Տե՛ս T. F. Mathews, p. 196, cat. 68, Pl. 46. հեղինակներն ասում են, որ սա «Կարապետ [Շահմիրի՞] և Ցակոբ [Շահմիրի՞]» ձեռքի գործն է. բանի որ թիկունքի արձանագրությունը և լուսանկարը բերված չեն, այս տեսակետը ճշգարկել չենք կարող, ուստի և հոդվածիս ամփոփման մեջ այս երկրորդ ձեռագրի մասին չենք խոսելու:

[5] Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հ. Ա., Վենետիկ, 1914, էջ 322 (այսուհետ՝ Ս. Սարգիսյան, էջ...): Ինչպես վերն ասացինք, նկարագրության «Տեղի» հարցի պատասխանի մեջ նշված է. «... հաւանօրէն Կեսարիա, ուր նոյն Մ. Ցակոբ բանդակել տուեր է ետքէն մի ուրիշ գործ եւս». չկարողացանք պարզել, թե որն է այդ «մի ուրիշ գործ»ը:

արձանագրությունը. «Սաղմոսս այս արարեալ հալալ ընչիս իւր՝ զարդարեցի արծաթաւ անարժան ձեռօք արծաթագործ Մալխասին, Մ. Յակոբ. թիւն Հայոց Ռ.Մ.Ե. վասն յիշեղութեան ամենայն եւ գոհանալ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի»[6]:

4. Նախկին Սվաճյան հավաքածուի ձեռ. N° 186. Ավետարան. արծաթէ կազմի մեջքին կա. «Աւետարան այս արարեալ հալալ ընչի իւր զարդարեցի արծաթաւ ի Կեսարիա քաղաքին անարժան ձեռօք արծաթագործ Մալխասին Մ. Յակոբ. թվին Հայոց Ռ. Մ. Թ. (1660) վասն յիշեղութեան ամենայն և գոհանալ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի»[7] արձանագրությունը:

5. Նույն հավաքածուի ձեռ. N° 185. Ավետարան. կոնակին այսպիսի արձանագրություն. «Աւետարան այս արարեալ հալալ ընչի իւր. զարդարեցի արծաթաւ ի Կեսարիայ քաղաքին ձեռօք արծաթագործ Ծահպազին Մ. Գրիգորին թվին հայոց ՌԺԺ.ին (1661) վասն յիշեղութեան ամենայն և գոհանալ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի»[8]:

6. Պրինստոն համալսարանի ձեռ. N° 21. Շարակնոց. ԺԷ դ., 267[9] թերթ. թուղթ. 16×11×6 սմ մեծության, նոտրգիր, 24 տող, գրիչ՝ Ալեքսան երեց, արծաթագործ՝ «Մալխասին Մ. Օհանէս», 1670 թ. «ի Կեսարիա»: Կազմի առաջին փեղկին քանդակված է վերջին դատաստանը. Աստված երկնքի մեջ՝ շրջապատված փող հնչեցնող հրեշտակներով: «Ձախին՝ դժոխք ներկայացնող կրակ, իսկ վարը, աջին՝ ձիավոր մը եւ երկու զինվորներ իրենց սուսերով»: Փեղկի ստորին մասում արձանագրված է. «Ցամաք լիցին ամենեքեան որք չարչարեն զծառայս քո»: Երկրորդ փեղկին քանդակված է «Այրի կնոջ լումա. կինը գանձանակի մեջ դրամ կը ձգէ՝ կանգնած տաճարի դրան առջև. աջին՝ Քրիստոս և երկու աշակերտներ կ'նային այրի կնոջ»: Փեղկի վերին մասում ունի հետևյալ արձանագրությունը. «Ժամագիրքս այս արեալ հալալ ընչիս իւր՝ զարդարեցի արզաթաւ Կեսարիա քաղաքին անարժան ձեռօք արծաթագործ Մալխասին Մ. Օհանէս թվին ՌԺԺԹ (1670) վասն յիշեղութեան ամենայն ժամ եւ գոհանալ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի», իսկ ստորին մասում «Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս ի տուն տեառն գնասցուք մեք» սաղմոսը[10]:

7. Վենետիկի Մխիթարյան մատենադարանի ձեռ. N° 1968 (ցուցակի՝ 845). Տոնացույց, 1671-ից առաջ, 150 թերթ, 13.5×10 սմ մեծության, մագաղաթ, 20 տող, ծաղկող և ստացող՝ Խաչատուր, արծաթագործ՝ «Ծահմիրին Մ. Յակոբ», 1671 թ. «ի Կեսարիա»: Կազմ՝ շագանակագույն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝

---

[6] Բ. Սարգիսյան, էջ 324. Հ. Քյուրտյան, էջ 52, նկար 3: Ցիշեղութեան բառի տեղ Քյուրտյանն ունի յիշելութեան: Նշենք, որ եսկայական նյութ նայած և ամփոփած Ա. Ալպոյաճյանի աչքից վրիպել է 1914 թվականին տպված՝ Վենետիկի ձեռագրացուցակի վերջերեյալ արծաթակազմի արձանագրությունը:

[7] Հ. Քյուրտյան, էջ 52, նկար 4:

[8] Հ. Քյուրտյան, էջ 52, նկար 5:

[9] Զ. Արզումանյան, «Բանքեր», էջ 378՝ բերբամանակը 269 է:

[10] Ա. Սանջյան, էջ 404: Զ. Արզումանյան, «Բանքեր», էջ 377-378 և «Սիոն», էջ 266 («Բանքեր», էջ 378՝ ունի ընչից, «Սիոն», էջ 266՝ ընչիս, եւ երկուսում էլ՝ թուին ձևերը). T. F. Mathews, p. 200 cat. 76, fig. 84: Հ. Քյուրտյանը, նկարագրելով Պրինստոն համալսարանի N° 20 ձեռագիրը, անհասկանալի պատճառով չի նկատել հաջորդ՝ N° 21-ը:

կարմիր տպածո կերպաս. արծաթապատվել է 1671 թ.: Ա փեղկի կենտրոնում 8×4 չափի մեծությամբ պատկերված է Եսայի մարգարեի տեսիլը՝ ամպերի վրա շինված տաճարի դիմաց: Վերևում բազմած է Աստված՝ մականով և գնդով, շրջապատված հինգ սերովբեներով, մինչ մի հրեշտակ ունելիով Եսայի մարգարեի բերանն է դնում հրաշեկ ածուխ: Այս պատկերի եզրերում կան զույգ-զույգ մարգարեների պատկերներ՝ մակագրությամբ. ութը աջից՝ Մովսէս և Յեսու, Յոբ և Սամուել, Նաթան և Դաւիթ, Եղիա և Եղիսէ, և ութը ձախից՝ Ովսէէ և Ամովս, Միքիա և Յովել, Յոնան և Նատում, Ամբակում և Սոփոնիա, իսկ ներքևում Եսայի, Երեմեա, Դանիէլ, Մաղաքիա, Զաքարիա, Աբդիու, Անգիա: Բ փեղկի կենտրոնում, 10×5 չափի մեծությամբ ներկայացված է Յիսուսը՝ խոսելիս, տաճարի դիմաց, շրջապատված առաքյալներով: Պատկերից աջ, ձախ և ստորև տասներկու առաքյալներն են. աջում՝ Պետրոս, Պօղոս, Անդրէաս, Յակոբոս, Թովմաս, ձախում՝ Բարդուղիմէոս), Յակոբ, Սիմոն, Թադէոս, Մատթէոս, ներքևում Փիլիպպոս, Բառնաբա: «Բազմավեպի» անստորագիր հոդվածի հեղինակը գրում է. «զսա և զՊօղոս երկոտասանից թղտում դնելով, զարմանք է, որ արուեստատրն դուրս թողեր է զՅովհաննէս և զՅուդա Յակովբեան: Կոնակի արձանագրութեան ներքեւն ալ՝ Յիսուսի ազգահամարին մէջ յիշուածներէն՝ երեք նահապետաց անուանք են, Աբրահամ. Փարիս. Նաասովն. առջինն՝ ոչ միայն նահապետ այլ և ազգապետ ըլլալով՝ վայելուչ էր յիշուիլ. միւս երկուքին ի՞նչ էր առաւելութիւնն քան զայլ նահապետս, որ յիշուելու արժան համարուին. — Յովհաննէս առաքեալ և աւետարանիչը չյիշողն՝ գիտէ զասոնք այլ յիշելու պատճառը. զոր կամ ինքն կարեւոր համարած է, կամ նոյնպէս իրեն հետեւող մ՝ ալ»[11]: Թիկունքին ունի հետևյալ արձանագրությունը. «Երգարանս այս (ար)արեալ հալալ ընչիս իւր (ընչիւքս) զարդարեցի արծաթաւ, Կեսարիա քաղաքին, անարժան ձեռօք, արծաթագործ Շահմիրին Մ. Յակոբ. թիւն Հայոց Ռ.Մ.Ի. վասն յիշելութեան ամենայն ժամ և զօհանալ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի»[12]:

8. Ավետարան, 1499 թվական, վայր՝ Երուսաղեմ, արծաթապատված 1676 թվականին: Ա. Ալպոյաճյանը գրում է. «Հին արեւելեան տախտակեալ կաշեպատ կազմ... որուն ո՞ր ոսկերիչին գործը ըլլալն ալ չենք գիտեր: Ձեռագիրը 1499-ին Երուսաղէմ գրուած Աւետարան մըն է, որ մէկը գնած է Խանձառն գիւղին եկեղեցւոյն նուիրելու համար: Յետոյ՝ 1571-ին ձեռագիրը կազմած է Պետրոս

---

11 Ճաշակ մի Կեսարացի Հայ Ոսկերչութեան. — «Բազմավէպ». 1895, էջ 77 (այսուհետ՝ «Բազմավէպ». էջ...): Նկատենք, որ փորձված ձեռագրագետ և մեր ուսուցիչ Գևորգ Տեր-Վարդանյանը վստահ է, որ այս հոդվածի հեղինակը Ղ. Ալիշանն է:

12 Ս. Ճեմճեմյան. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հ. Ե, Վենետիկ - Ս. Ղազար, 1995, էջ 1015-1018. Նաև՝ «Բազմավէպ». 1895, էջ 76-77. Հ. Գյուտյան, էջ 54, նկար 7: Հ. Գյուտյանը յիշելութեան բառի փոխարեն ունի յիշելու»իւն, իսկ Ս. Ճեմճեմյանը՝ յիշելո(յ) ի թիւն: Մյուս տարբերությունները չենք նշում: Ավելացնեմ նաև, որ Ս. Ճեմճեմյանն, ձեռագրացուցակի անձնանունների ցանկում՝ էջ 1230, միայն Յակոբ անձնանվան տակ եւ «Շահմիր. 1671 թ., արծաթագործ ի Կեսարիա. էջ 1018» հղումը, այսինքն՝ «Շահմիրին Մ. Յակոբ» արտահայտությունը համարել է մի մարդու անուն: Նկարագրության «Տեղեկութիւնք» հարցի ոլմաց Ս. Ճեմճեմյանը նշում է. «Տեղեկութիւնք՝ կը պակսին. հաւանաբար հին ժամանակներէ ի վեր արծաթեայ կողքը ցուցադրուած ըլլալով վանքիս թանգարանը՝ երկար ատեն սնաած է առանց ձեռագրական քուահասարի, եւ ապա ստացած է 1968 թիւը» (էջ 1016):

կրօնաւոր մը և նուիրած է Կեսարիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյն: Կը թուի թէ 1676-ին արծաթապատուած է կազմը, վասնզի արծաթին վրայ ըստ Տրդատ եպ. Պալեանի կը կարդացուէր հետեւեալ յիշատակարանը. «Ծ(ի)ն(ե)ց(ա)ւ արծաթապատ. Սբ. Աւետարանս. ընչիւք Մեսաստ Աննայի գանձանակին. ի վայելումն եկ(ե)ղ(ե)ցւոյ Սբ. Ա(ստուա)ծածնին. ի թվին ՌՃԻԵ (1676) ամեն. յիշատակ է Ա(ստուա)ծածնին Կեսարեայ Կապաթովկին»: Դժբախտաբար ոսկերիչը փոյթ չէր ունեցած նշանակելու իր անունը, իսկ Տրդատ եպ. Պալեան՝ լուսանկարելու»[13]:

9. Սաղմոսարան. ըստ Հ. Մկրտիչ վրդ. Պոտուրյանի տեղեկության, գտնվում էր J. Davis անունով մի ամերիկացու մոտ, «կողքը» արծաթով է զարդարված Կեսարիայում 1683 թվականին արծաթագործ «Շահպազին որդին Եղիային» ձեռքով[14]:

10. Սվաճյան հավաքածուի «մէկ արծաթ կազմն է, որուն յիշատակարանը կը կարդացուի. «Ծինեալ ի Կեսարիոյ քաղաքին ի թուին Հայոց Ռ.Ճ.Լ.Զ. (1687)»[15]:

11. Պրահա. քարոնուհի Լանայի հավաքածու. Ավետարան, անթվական, կազմը պատրաստված է 1691 թվականին, Կեսարիայում: Ֆ. Մակլերը նկարագրել է այս ձեռագիրը և, լուսանկարով հանդերձ, ներկայացրել կազմի արձանագրությունը և նրա ֆրանսերեն թարգմանությունը, այսպես.

«Աւետարանս այս արեալ հա
լալ ընչիս իւր զարդարէցի
առծադաւ Կեսարիա քաղաք
ին անառծան ցէրոք արծա
դագործ Մալխասին Հաճի
Կրտպ. թին ՌՃԽ
վասն յիշէլութիւն ամէ
նայն ժամ եւ քոհանալ
փրկչին մէրօ Ցս.ի Քս.ի»[16]:

12. Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռ. № 416. Ժամագիրք, ԺԴ-ԺԵ դ., 200 թերթ, մագաղաթ, գրիչ և ծաղկող՝ Հովհաննես սարկավագ, արծաթագործ՝ «Մալխաս Մ. Կարապետ», 1691 թ. «ի Կեսարիա»: Կազմի «մէկ կողմն՝ Մնունդ, միւսն՝ Ցարութիւն»: Հ. Տաշեանը նկարագրել է. «...արծաթի կողին վրայ բարձրաքանդակ դրոշմուած. նախ առաջին կողին նկարի վերն՝ «Փառք ,ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն». տակը՝ «Եւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ եւ պատեաց զնա եւ ի խանձարուրս եւ եդ զնա ի մսուր, զի ոչ գոյր ն[ո]ց[ա] տ[եղի] իջեւանի»: Կողին կոնակը՝ «Ժամագիրքս այս արեալ հալալ ընչիս իւր զարթ արեցի արծաթաւ, Կեսարիա քաղաքին, անառծան ձեռոք արծաթագործ

---

[13] Ա. Ալպոյաճյան, Պատմություն Հայ Կեսարիոյ, Կահիրե, 1937, հ. Բ, էջ 1515 (այսուհետ՝ Ա. Ալպոյաճյան, էջ...): Հ. Գյուրտյան, էջ 54:

[14] Ա. Ալպոյաճյան, էջ 1517:

[15] Հ. Գյուրտյան, էջ 54:

[16] F. Macler, Notice d'un Tétraévangile Arménien de la collection Lanna (Prague). — Revue des etudes Arméniennes, t. VI, Paris, 1926, p. 29-30. Նաև՝ Ա. Ալպոյաճյան, էջ 1516: Թե՛ Մակլերի և թե՛ Ա. Ալպոյաճյանի մոտ արձանագրությունը ներկայացված է մասնակի սխալներով: Առաջնորդվել ենք Ֆ. Մակլերի տպած լուսանկարով:

Մալխասն Մ. Կարապետ, թիւն ՌՃԻ (=1671)[17] վասն յիշողութեան ամենայն ժամ եւ գոհանալ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի». ասոր տակ երեք մանր կիսարձան-նկարիկներ, որոնց ներքեւ գրուած է անունները՝ «Աբրահամ, Փարէս, Նասսովն»[18]: «Բազմավէպ»-ի վերոնշեալ անստորագիր հոդվածի հեղինակը գրում է. «Եւ է սա Մալխաս արծաթագործն կեսարացի, որ առաջինէն քսան տարի մի վերջը, 1691, Յոյնպիսի արծաթեայ կազմ մի շինած է Ժամագրոց, նմանաբան արձանագրութեամբ կոնակին. «Ժամագիրքս այս (ար)արեալ հալալ ընչիս... արծաթագործ Մալխասն Մ. Կարապետ: Թիւն Ռ. Ճ. Խ. վասն յիշողութեան», և այլն: Այս արձանագրութեան ներքեւ այլ կան այդ երեք նահապետաց անունանքն: Իսկ երկու երեսաց առաջինին վրայ պատկերացեալ է Յնունդ Փրկչին, սովորական ծանօթ կերպով, հովիւներով, հրեշտակներով և այլն, և քանի մի աւետարանի խօսքերով. միւս երեսն ներկայացընէ զՅարութիւն Քրիստոսի, գերեզմանովն, պահպանօք, հրեշտակով և Իւղաբեր կանամբք: Ասոնց ստորագրութիւնն և պատկերատպութիւնը՝ գուցէ օր մի ի լոյս հանէ մեր բարեկամն ստացող, լաւագոյն կերպով և իր մանրակրկիտ ոճով, եթէ կ'արժէ...» – ավարտում է հեղինակը[19]:

13. «Վենետիկի Մխիթարեանց հաւաքման մէկ արծաթակազմ Աւետարանն է սա յիշատակարան-արձանագրութեամբ արծաթ կազմին կոնակը. «Աւետարանս այս ար.եալ հալալ ընչիս իւր զարդարեցի արծաթաւ Կեսարիա քաղաքին անարժան ձեռօք արծաթագործ Մալխասին Մ. Կարապետ թիւն Ռ. Ճ. Խ. (1691) վասն յիշողութեան ամենաժամ և գոհանալ Փրկչին մերոյ Ց(իսու)սի Ք(րիստո)սի»[20]:

14. Նյու Յորքի The Metropolitan Museum Art, ձեռ. N° 1699. Ավետարան, ԺԳ դ., 301 թերթ, մագաղաթ, 25.5×17 սմ մեծության, բոլորգիր, 19 տող, արծաթագործ՝ «Աստուածատուր Շահամիր», 1691 թ. «ի Կեսարիա»: Ա փեղկին Քրիստոսի Յնունդն է, վերևում հովիվների հայտնվելը, հրեշտակների խումբ, աստղին՝

---

[17] Պետք է լինի ՌՃԽ (= 1691):

[18] Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 869-870, տախտակ է, պատկեր 4: Տե՛ս նաև Ա. Ալպոյաճյան, էջ 1514-1515: Հ. Քյուրտյան, էջ 52-54, նկար 6:

[19] «Բազմավէպ», էջ 77: Հ. Տաշյանը, ծանոթագրության մեջ հղելով «Բազմավէպի» նշված հոդվածը (էջ 870), գրում է. «Ճիշդ մեր ձեռագրին կազմին հետ նույն կազմ ունի ՌՃԻ թուին (=1671) Տանցոյց, Պարզատումար եւ ժամանագրութեան (ժամակարգութեան - Ա. Մ.) երգոց մատեան մը, նոյնպէս կեսարիա քանդակուած՝ արծաթագործ Շահամիր Մ. Ցակոբէն...»: Հիշելով Վենետիկի Մխիթարյան հավաքածուի N° 1968 ձեռագիրը, արծաթագործ «Շահամիր Մ. Ցահոր», 1671 թ., Հ. Տաշյանը ոչինչ չի գրում արծաթագործ «Մալխաս Մ. Կարապետ»-ի 1691 թ. պատրաստած կրնակազմի մասին: Ենթադրելի է, որ «Բազմավէպ»-ում նկարագրված երկրորդ ձեռագիրը Վենետիկի Մխիթարյան հավաքածուի N° 416 ձեռագիրն է: Բազմավեպի նկարագրությունը համեմատելով Տաշյանի ցուցակի է տախտակի լուսնկարի հետ, կարող ենք վստահ ասել, որ այս ձեռագրերը նույնն են: Նույն կարծիքին է նաև Գևորգ Տեր-Վարդանյանը, ավելին, նա համոզված է, որ Ղ. Ալիշանի «Ասոնց ստորագրութիւնն և պատկերատպութիւնը՝ գուցէ օր մի ի լոյս հանէ մեր բարեկամն ստացող, լաւագոյն կերպով և իր մանրակրկիտ ոճով» արտահայտությունը (ընդգծումը մերն է – Ա.Մ.) վերաբերում է հենց Հ. Տաշյանին: Քյուրտյան, էջ 54 ծ. ասում է. «Ալպոյաճեան իր վերոյիշեալ գործին մէջ ՌՃԽ (1691) նշանակած է սխալմամբ». կարծում ենք, որ Ա. Ալպոյաճյանի նշած կազմի պատրաստման թվականը ճիշտ է:

[20] Հ. Քյուրտյան, էջ 55, նկար 8: Նշենք նաև, որ այս ձեռագիրը չգտնվի Բ. Սարգիսյանի Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վենետիկ, հ. Ա, Վենետիկ, 1914, էջ 373-794 Ավետարանների բաժնում. հավանաբար հավաքածու է մտել 1914 թվականից հետո:

մոգերի հետևելը: Եզրերում խաղողի որթի նման կապույտ և կանաչ կիսաթափանցիկ արծն է, մասամբ ոսկեջուր, տեղադրված ակներով: Գագաթի և ներքևի կենտրոնում պահպանված է մեծ զմրուխտ՝ բյուրեղապակե զարդաքանդակ մեջքով, շրջապատված 3 նռնաքարով և 3 փիրուզե զանգվածներով. յուրաքանչյուր անկյունում զանգվածեղ փիրուզը շրջապատված է 4 նռնաքարով: Աջ եզրի կենտրոնում փիրուզե զանգված է, ձախ եզրի կենտրոնում՝ շափյուղե ապակի, յուրաքանչյուրը շրջապատված է 3 օտար մարգարիտով և 3 զմրուխտով: Վերևում և ներքևում բյուրեղապակե կանաչ զարդաքանդակներով եզրագծերի կենտրոնական խմբեր են՝ շրջապատված նռնաքարերով: Բ փեղկին ներկայացված է Հարության պատկերը՝ կնքված գերեզմանով, քնած զինվորներով և այլն: Ետևում կանաչ և կապույտ կիսաթափանցիկ էմալ է: Էմալի վրա խաղողի որթի եզրագիծ է, մասամբ ոսկեջուր, թանկարժեք ակերով: Կենտրոնի գագաթին և հատակին շափյուղագույն ապակի է՝ վերևում և ներքևում նռնաքարով, ամեն կողմում զմրուխտ: Վերին աջ անկյունում 4 ակով շրջապատված զմրուխտ է, ավելի ներքև՝ աջ, մի նռնաքար, մնացած երեքը ընդօրինակումներ են: Վերին ձախ անկյունում մեջտեղի քարը բացակայում է, մյուսները նռնաքարեր են: Ներքևի ձախ անկյունում զմրուխտ է՝ շրջապատված 4 նռնաքարով, վերին աջ անկյունում ընդօրինակություն է: Եզրերում ընդօրինակված տպազիոնների խումբ է՝ շրջապատված 4 ընդօրինակված շափյուղներով, վերևում և ներքևում մի օտար մարգարիտ: Մեջքին ռոմբաձև կաղապար է, վերևի և ներքևի եզրերը կարված են ոսկեջուր քարձրություններով. տեղադրված են 8 նռնաքար և 118 ապակե կամ բյուրեղապակե ակեր:

Ա փեղկի վերևում ունի. «Փարք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խա», ներքևում. «Աւետարանս այս արեալ հալալ ընչիս իւր աղօթելու եւ գօհանալ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի»[21]: Կազմի մեջքին ունի. «Եւ զարդարեցի արծաթաւ ի թվն Հայոց ՌՃԽ (= 1691; անարժան Աստուածատուր Ծահամիրին ի քաղաքըն Կիսարիա կարօղութեանքն Աստուծոյ» արձանագրությունը[22]:

15. Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. № 10369. Ավետարան, ԺԷ դ., Եվդոկիա՞. 248 թերթ, թուղթ, բոլորգիր, երկսյուն, 23 տող, գրիչ և ծաղկող՝ Մկրտիչ (Զահնկա՞լ), ստացող՝ Հովհաննես չելեպի, արծաթե կրկնակազմ ԺԷ դ. վերջ: Կրկնակազմ թիթեղները 22,9×15,8 սմ չափի են՝ պատրաստված դրվագմամբ եղանակով: Ա փեղկին պատկերված է Քրիստոսի Ծնունդը՝ գառնարած հովվով, աստղին հետևող մոգերով, հրեշտակներով և այլն: Բ փեղկին պատկերված է Քրիստոսի Հարությունը: Վերևում, ամպերի մեջ, հրեշտակներով շրջապատված Քրիստոսն է՝ կանգնած, ձեռքերն աջ ու ձախ բացված: Ներքևում պատկերված են 12 առաքյալները, որոնց միջև 2 հրեշտակներ են: Թիկունքին, վերևում Հայր Աստվածն է՝ ձախ ձեռքին գունդ, իսկ ներքևում Մարիամն է՝ թագը գլխին, ձեռքերն

---

[21] Տե՛ս Լ. Գ. Մինասյան, Հայերեն երկու գրչագիր Նյու Յորքի «Հանրային գրադարան»-ում, «Հայագիտական հանդես», հ. Դ. Բեյրութ, 1973, էջ 170 և լուսանկար էջ 171: Հեղինակը նկարագրել է միայն Ա փեղկը՝ ձեռքի տակ ունենալով փեղկի լուսանկարը, իսկ բուն ձեռագիրը տեսնել չի հաջողվել:

[22] Ա. Սանջյան, էջ 471-472. T. F. Mathews, p. 183, cat. 50, fig. 79.

իրար միացրած[23]: Արդյո՞ք սա Մալխաս Մ. Կարապետի կամ Աստվածատուր Ծահամիրի պատրաստած կրկնակազմն է, դժվարանում ենք ասել[24]:

16. Փարիզի Լուվրի հնավաճառանոցում 150,000 ամերիկյան դոլարով այժմ վաճառվում է մի Ավետարան (Akron-London). 1700 թ. «ի Թոխաթ», 256 թերթ, թուղթ, 27×20,2 սմ մեծության, երկսյուն, բոլորգիր, 21 տող, գրիչ՝ Գեորգ, ծաղկող՝ Միքայել, արծաթե կրկնակազմ՝ 1700-ի շուրջ, «ի Կեսարիա», արծաթագործ՝ անհայտ: Ա փեղկի կենտրոնում ներկայացված է մանուկ Քրիստոսի Գալուստը տաճար՝ շրջապատված 12 խորանաններով, յուրաքանչյուրը երկու դիմանկարով՝ ներկայացնելով 24 մարգարեներ: Այս տեսարանի ներքևում, փոքրիկ խորանում, ներկայացված է Մարիամի Ավետումը՝ շուշանների փունջ բռնած հրեշտակով և վերևից իջնող լույսի ճառագայթներով: Ներքևի շրջանակը զարդարված է 8 վարդաքանդակներով, որոնց էմալը գունավորած է մուգ կապույտ, կապույտ, դեղին և կանաչ: Բ փեղկի կենտրոնում Համբարձումն է: Աստվածածինը կանգնած է 6 առաքյալների երկու խմբի մեջտեղում: Քերովբեի գլուխը հայտնվում է վերին անկյունի վերևի ամպից. Քրիստոսը նստած, մի ձեռքին բռնել է բացված փաթույթը, իսկ մյուս ձեռքով օրհնում է. 4 հրեշտակները ներսի մասում են՝ յուրաքանչյուր կողմից mandorla բռնելու փոխարեն: Տասներկու խորանները, ներկայացնելով 12 առաքյալներին, լրացնում են արտաքին եզրը: Ներքևի կենտրոնական խորանը պատկերում է Քրիստոսի Մկրտությունը՝ մի հրեշտակի ուղեկցությամբ Հովհաննես Մկրտչի կողմից, և Սուրբ Հոգու իջնելը: Կազմի ստորին խումբը զարդարված է 8 վարդաքանդակով՝ Ա փեղկի վարդաքանդակների նման[25]:

17. Բալթիմորի Walters Art Gallery, ձեռագիր W 540. Ավետարան, 1475 թ., 260 թերթ, թուղթ, 26,6×18 սմ մեծության, բոլորգիր, երկսյուն, 22-23 տող, գրիչ՝ Արիստակես, արծաթակազմ՝ պատրաստված մոտավորապես 1700-ական թթ., Կեսարիա: Ա փեղկին պատկերված է մոգերի Երկրպագությունը. երկնքում 3 քերովբե է, իսկ ներքևում երեքնուկաձև կառուցված 4 զարդ: Բ փեղկին Համբարձումն է. Քրիստոսը՝ պարզած ձեռքերով, շրջապատված 4 հրեշտակներով, ներքևում Աստվածածինն է՝ պարզած ձեռքերով, շրջապատված առաքյալներով: Սիլվի Մերյանը և Հելեն Էվանսը գրում են, որ թեև կրկնակազմն անթվական և առանց արձանագրության է, սակայն կազմերի ոճական և տեխնիկական առանձնահատկությունները լավ բաղդատված են Կեսարիայում պատրաստված այլ կազմերի հետ: Երկու թիթեղների եզրերը խաղողի որթի ձևի են՝ զարդարված էմալով, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերով: Ճիշտ նույնը կարող ենք գտնել Metropolitan Museum of Art-ի Ավետարանի կազմերի վրա՝ պատրաստված 1691 թ. Կեսարիայում Աստվածատուր Ծահամիրի ձեռքով: Համբարձման համանման կառուցվածքայնություն գտնվում է նաև նախկին Սվաճյան հավաքածուի N° 185

---

23 Տե՛ս ՄՄ. ձեռ. N° 10369:

24 Հմմտ. աստ 11-րդ և 13-րդ ձեռագրերի կրկնակազմերի և փեղկերի նկարագրությունները:

25 Catalogue 4, A Selection of Manuscripts Throgh the Ages, Les Enluminures, 1995, p. 145 N° 41, T. F. Mathews, p. 145 cat. 1, Pl. 47, նկ. 81.

ձեռագրի կազմի վրա՝ պատրաստված Կեսարիայում Մ. Գրիգոր Ծաճպազի ձեռքով 1661 թ. կամ 1701 թ.[26]:

18. Բալթիմորի Walters Art Gallery, ձեռագիր W 542. Ավետարան, 1488 թ., Եկեղյաց գավառի Օգսենտի վանք. 281 թերթ, թուղթ, 25×18,3 սմ մեծության, երկսյուն, բոլորգիր, 21 տող, գրիչ՝ Ղազար քահանա, արծաթակազմ՝ մոտ 1700-ին, Կեսարիա: Ա փեղկին Հայտնությունն է, Բ փեղկին՝ Համբարձումը: Սիլվի Մերյանը և Թոմաս Մաթյուսը նշում են, որ Հայտնության տեսարանը կառուցվածքայնորեն ճիշտ նույն է, ինչ Ակրոն-Լոնդոնի Ավետարանի Ա փեղկինը և Փարիզի նախկին Սվաճյան հավաքածուի՝ համար չունեցող ձեռագրինը: Համբարձման պատկերը Ակրոն-Լոնդոնի ձեռագրի Բ փեղկի փոփոխակն է: Walters-ի ձեռագրի պատկերները ցածրադիր են, ինչպես՝ Ակրոն-Լոնդոնի Ավետարանում և Walters-ի 540 ձեռագրի Հայտնության և Համբարձման պատկերներում: Այդուամենայնիվ, Walters-ի ձեռագրի փեղկերի եզրերը տարբերվում են. երկու փեղկերին կան քերովբեների այլ կառուցվածք, վարդազարդեր, կրկնակ կոր գծեր: Բացի դրանից, արծաթե թիթեղները, ի տարբերություն Ակրոն-Լոնդոնի կազմի, երբեք արծնապատված չեն եղել[27]:

19. Բոստոնի Հանրային գրադարանի ձեռ. N° 1. Մաշտոց, 1698 թ., 157 թերթ, թուղթ, 15.5×10.3 սմ մեծության, նոտրգիր, 23 տող, արծաթագործ՝ «Մալխասին Մ. Կարապետին», 1704 թ. «ի Կեսարիա»: Ա փեղկի մեջտեղում հրեշտակներով շրջապատված Աստծո պատկերն է, որի շուրջ քանդակված են տասնչորս մարգարեները՝ իրենց անուններով: Բ փեղկին քանդակված են տասներկու առաքյալները՝ իրենց անունների մակագրությամբ, իսկ կենտրոնում Քրիստոսն է: Ձեռագրի մեջքին կա հետևյալ արձանագրությունը. «Մաշտոցս այս Մուրատ որդի տէր Աբրահամին զոր ինքն ըստացաւ եւ զարդարեց արծաթաւ Կեսարիա քաղաքին ձեռամբ արծաթագործ Մալխասին սուրբ Կարապետին. թվն. ՌՃՄԳ (= 1704)»[28]:

20. Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. N° 10411. Սաղմոսարան, ԺԶ դար, 322 թերթ, 9×6 սմ մեծության, թուղթ, բոլորգիր, միասյուն, գրիչ՝ Հերապետ Հոռոմկլայեցի, արծաթագործ՝ «Մալխասին Մ. Կարապետին», 1704 թ. «ի Կեսարիա»: Կրկնակազմը 8,9×6,4×4,7 սմ չափի է՝ պատրաստված ձուլման և դրվագման եղանակներով[29]: Ա փեղկի բարձրաքանդակների մեջտեղում պատկերված է Դավիթ մարգարեն՝ նստած, թագը գլխին, թիկնոցով, ձեռքին՝ քնար: Քնարի վրա նստած է թռչունը ծալած հրեշտակ, իսկ ներքևում բացված գիրք է: Մարգարեի

---

26 Տե՛ս T. F. Mathews, p. 150, cat. 9, fig. 80.

27 Տե՛ս T. F. Mathews, p. 152, cat. 11, fig. 83.

28 Ա. Սանջյան, էջ 338: Ծուցակի 335-338 էջերում բերված է գրչության հիշատակարանը. «Աւարտ եղեւ Մաշտոցս յետնեալ ախնդոր Խիկար երեցն, ի թվականիս ՌՃԽԷ (=1698), ի տպրիլ ամսոյն ԺԷ. ին. ի վայելումն Մուրատի՝ որդի տէր Աբրահամին, զոր ինքն ըստացաւ զսայ իւր հալալ արդիւնքն: Զոր եթէ հանդիպիցէ զսայ՝ կարդալով կամ հարեւանցի տեսանելով յիշեցէ՛ք մի հայր մեղայիւ, զոր Տէրն զձեզ ողորմեսցի. ամէն: Հայր մեր»: Արձանագրության մեջ, մեր համոզմամբ, բերված սուրբ բառի փոխարեն պետք է կարդալ Մ. տառը. Մ տառը ընկալվել է բբրև կապիր՝ ԱԲ համառոտագրություն: Տե՛ս նաև T. F. Mathews, p. 156, cat. 15, fig. 78.

29 Տե՛ս Ա. Մալխասյան, Հայերեն ձեռագրերի կազմերը և նրանց պատրաստման եղանակները. «Էջմիածին» ամսագիր, 1995, N° 2, էջ 75-80:

ետևում երևում է եկեղեցու սյուն, որի վերևից դեպի մարգարեն է իջնում աղավնակերպ Սուրբ Հոգին: Ա փեղկի բարձրաքանդակի ներքևում կա երկաթագիր, չափածո արձանագրություն.

«Գ(Ա)ՆԱՐ Ի ՋԵՌԻՆ ԴԱՒԻԹ ՄԱՐԳԱՐԷ,
ՋԵՐԳ ԱՌՈՒՐԼԷ ՍԱՂՄՈՍԻՆ ՀՈԳՒՈՎ ՋԱՐԴԱՐԷ»[30]:

Բ փեղկին Ծննդյան պատկերն է, վերևում հրեշտակների միջև քանդակված ժապավենին կա այսպիսի արձանագրություն. «Ի Բ(Ա)ՐՑ(Զ)[ՈՒ]ՆՍ ԱՍՏՈՒԾՈ]Ց և ԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒ]Թ[ԻՒ]Ն», իսկ ներքևում, բարձրաքանդակների տակ՝ «և ԾՆԱՒ ԶՈՐԴԷՆ ԻՒՐ Զ(Ա)ՆԴՐ(Ա)Ն[Ի]Կ և Պ[Ա]ՏԵԱՑ /Ի ԽԱՆԶ(Ա)ՐՈԷՐՍ և ԵԴ ԶՆԱ Ի ՄՍՈՒՐ, ԶԻ ՈՉ /ԳՈՑՐ ՆՈՑԱ ՏԵՂԻ ՑԻՋԵՒԱՆԻՆ» արձանագրությունը: Ջեռագրի թիկունքին՝ վերևում, կիսախորանի մեջ պատկերված է Հայր Աստված՝ մագաղաթե փաթույթը ձեռքին, իսկ ներքևում, խորանների մեջ, լուսապսակներով երեք նահապետներն են՝ «ԱԲՐ(Ա)ՀԱՄ, ՓԱՐԷՍ, ՆԱԱՍՈ[ՎՆ]» մակագրությամբ: Թիկունքի մեջտեղում բուն արձանագրությունն-հիշատակարանն է.

«ՍԱՂՄՈՍԱՐԱՆՍ ԱՑՍ /ՄՈՒՐԱՏ ՈՐԴԻ ՏԻ(Է)Ր ԱԲՐԱՀԱՄԻՆ, ՋՈՐ /ԻՆՔՆ ԸՍՏԱՑԱՒ և /ՋԱՐԴԱՐԷՑ ԱՐԾԱ/ԴԱՒ ԿԵՍԱՐԻԱ ՔԱՂ/ԱՔԻՆ ՋԵՌԱՄԲ /ԱՐԾԱԹԱԳՈՐԾ ՄԱ/ԼԽԱՍԻՆ Մ. ԿԱՐԱՊԵ/ՏԻՆ, ԹՎ[Ի]Ն ՌՃՃԳ (1704)»[31] (նկար 1):

21. Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. № 10356. Ճաշոց, 1679 թ., Եվդոկիա, 326 թերթ, 38,7×25,3 սմ մեծության, թուղթ, բոլորգիր, երկսյուն, 40 տող, գրիչ և ծաղկող՝ Մկրտիչ երեց, կազմող՝ Աստվածատուր, ստացող՝ մահտեսի Կիրակոս, արձաթագործ՝ «Ծահմիրին Մ. Ցակոբ», 1741 թ. «ի Կեսարիա»: Կրկնակազմ թիթեղները 39,3×25,2 սմ չափի են՝ պատրաստված ձուլման, և դրվագման եղանակներով: Կրկնակազմի Ա փեղկին պատկերված է գեղեցիկ մեծ խորան, որից դուրս, վերևի ձախ և աջ կողմերում՝ ամպերին կանգնած շեփորահարող մեկական հրեշտակներ են: Խորանի ներսում քանդակազարդ գեղեցիկ սյուներով փոքր եկեղեցու կամ խորանի պատկեր է: Վերևի ձախ և աջ պատվանդանանման սյուներին Ղուկաս և Հովհաննես ավետարանիչներն են՝ իրենց խորհրդանիշներով՝ եզ և արծիվ, որոնցից ցած, երկու այլ սյան վրա նստած են մեկական վեցթևյան հրեշտակներ: Կենտրոնում մեդալիոնանման շրջանակ է, ներսում պատկերված է Աստվածամոր թագադրումը. Աստվածամայրը կանգնած, ոտքերի տակ՝ օձ, իսկ վերևում, ձախ և աջ կողմերում Քրիստոսը (կլոր լուսապսակով, ձեռքին խաչ) և Հայր Աստվածը (եռանկյուն լուսապսակով, ձեռքին գավազան) Աստվածամոր գլխին պահել են մի թագ, որի միջև աղավնակերպ Սուրբ Հոգին է: Փեղկի

---

30 Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերի արձանագրությունները վերծանելիս օգտագործել ենք ընդունված հետևյալ նշանները.

[ ] — լրացվում են հապավված տառերն ու տառաշարքերը,

( ) — վերծանվում է թվականը. ներկայացվում է ճիշտ տառը,

/ — նշվում է տողի սկիզբը:

Ողղագրական սահմանված կանոններից շեղվող տառերը ներկայացված են թավ, իսկ կապգրությունները՝ ընդգծված:

31 Տե՛ս ՄՄ. ձեռ. № 10411:

ներքևում, բարձրաքանդակների տակ կա երկաթագիր հետևեալ արձանագրությունը.

«ԳԻՐՔՍ ԱՅՍ ԱՐ(ԱՐ)ԵԱԼ ՀԱԼԱԼ ԸՆԶԻՍ ԻՒՐ ՁԱՐԴԱՐԵՑԻ ԱՐԾԱԹԱՒ ԿԵՍԱՐԻԱ ՔԱՂԱՔԻՆ /ԱՆԱՐԺԱՆ Ց(Ջ)ԵՐ(Ռ)ՕՔ ԱՐԾԱԹԱԳՕՐԾ ԾԱՀՄԻՐԻՆ Մ. ՑԱԿՈԲ, ԹԻՒՆ ՀԱՅՑՈՑ /ՌԺՂ (1741), ՎԱՍՆ ՑԻՕԵԼՈՒԹԵԱՆ ԱՄԷՆԱՑ(Ն ԺԱՄ և ԳՕՀԱՆԱԼ ՓՐԿՉԻՆ ՄԵ(Ր(Ո)Ց Ց(ԻՍՈՒ)ԱԻ Ք(ՐԻՍՏՈ)ԱԻ»:

Բ փեղկի կրկնակազմը հար և նման է Ա փեղկին, տարբեր է միայն մեդալիոնաձև շրջանակի պատկերը. այստեղ Աստվածամայրն է՝ Քրիստոսը գրկին (Քրիստոսի երկրորդ և երրորդ մատները բացված), վերևի ձախ և աջ կողմերում երկու հրեշտակ թագ են պահել Աստվածամոր գլխին, իսկ մեջտեղում աղավնակերպ Սուրբ Հոգին է: Վերևի ձախ և աջ պատվանդանանման այուներին Մատթեոս և Մարկոս ավետարանիչներն են իրենց խորհրդանիշներով՝ մարդ և առյուծ[32] (նկար 2):

Այսպիսով, ներկայացված[33] քսանմեկ ձեռագրերն այժմ պատկերենք համառոտակի՝ ըստ կրկնակազմի պատրաստման թվականի, ձեռագրի բովանդակության և արծաթագործի.

1653 թ. – Ժամագիրք, արծաթագործ՝ Ծահմիրին Մ. Կարապետ.
1659 թ. – Երգարան, արծաթագործ՝ Կարապետ և Ցակոբ.
1656 թ. – Սաղմոսարան, արծաթագործ՝ Մալխասին Մ. Ցակոբ.
1660 թ. – Ավետարան, արծաթագործ՝ Մալխասին Մ. Ցակոբ.
1661 թ. – Ավետարան, արծաթագործ՝ Ծահպազին Մ. Գրիգորին.
1670 թ. – Ծարակնոց, արծաթագործ՝ Մալխասին Մ. Օհանէս.
1671 թ. – Տոնացույց, արծաթագործ՝ Ծահմիրին Մ. Ցակոբ.
1676 թ. – Ավետարան, արծաթագործ՝ անհայտ.
1683 թ. – Սաղմոսարան, արծաթագործ՝ Ծահպազին որդին Եղիա.
1687 թ. – բովանդակություն և արծաթագործ՝ անհայտ.
1691 թ. – Ավետարան, արծաթագործ՝ Մալխասին Հաճի Կարապետ.
1691 թ. – Ժամագիրք, արծաթագործ՝ Մալխասին Մ. Կարապետ.
1691 թ. – Ավետարան, արծաթագործ՝ Մալխասին Մ. Կարապետ.
1691 թ. – Ավետարան, արծաթագործ՝ Աստվածատուր Ծահամիր.

---

[32] Տե՛ս ՄՄ. ձեռ. N° 10356: Կրկնակազմի փեղկերը, հավանաբար, սխալ են տեղադրվել. ըստ ավետարանիչների և մեդալիոնի պատկերների թեմաների տրամաբանական հաջորդականության՝ Ա փեղկին դրված թիթեղը պետք է փակցվեր Բ փեղկին, իսկ երկրորդինը՝ առաջինին:

[33] Բերված հուշարձաններից բացի, Հ. Գյուրտյանն իր ուսումնասիրության տասներկուերորդ ձեռագիրը նշում է Վենետիկի N° 186 Ավետարանը, սակայն վստահ չէ. «կրնայ կեսարիայ շինուած առծաթ կազմ մը ըլլալ»: Բերում է կեսարիայի Տումարգա գյուղում 1630 թվականին գրված հիշատակարանը և ավելացնում. «... արծաթակազմին վրայ կը կարդացուի՝ «Ց(ի)շ(ա)տ(ա)կ է սբ. աւետարանս սուրբ Թորոս եկեղեցին՝ Ապրահամ Ակօրին Անճա Սուլդան Մուրատին» (տե՛ս Հ. Գյուրտյան, էջ 65, նկար 9 և 10: Նաև՝ Բ. Սարգիսյան, ե. Ա., էջ 778, ձեռ. N° 1707 (ցուցակի՝ 186). Նշենք, որ Բ. Սարգիսյանի մոտ Ապրահամ բառի փոխարեն Արտահամ է, իսկ Անճա բառի փոխարեն և է, այսինքն՝ Ակօրին և Սուլդան Մուրատին): Կրկնակազմը, ըստ ամենայնի, պատրաստված է Ամիդում, ուր վստահաբար կար Ս. Թորոս եկեղեցի:

ԺԷ դ. - Ավետարան, արծաթագործ՝ անհայտ.
1700 թ. - Ավետարան, արծաթագործ՝ անհայտ (Akron-London).
1700 թ. - Ավետարան, արծաթագործ՝ անհայտ (Walters MS W 540).
1700 թ. - Ավետարան, արծաթագործ՝ անհայտ (Walters MS W 542).
1704 թ. - Մաշտոց, արծաթագործ՝ Մալխասին Մ. Կարապետին.
1704 թ. - Սաղմոսարան, արծաթագործ՝ Մալխասին Մ. Կարապետին.
1741 թ. - Մաշտոց, արծաթագործ՝ Ծահմիրին Մ. Ցակոբ:

Ինչպես տեսնում ենք, Կեսարիայում գործել են բազմաթիվ արծաթագործներ, որոնց նրբին աշխատանքներն այժմ էլ անգնահատելի արժեք ունեն: Նրանց մեջ ավելի հաճախակի են հիշատակվում Մալխաս և Ծահմիր անունները: Իսկ ովքե՞ր են Մ. Կարապետը, Մ. Հակոբը և մյուսները, ձեռագրի տե՞րը, պատվիրատո՞ւն, կազմո՞ղը. կամ ի՞նչ է նշանակում արձանագրություններում հիշատակված Մ. գիրը:

Բազմավեպի անանուն հեղինակը, նկարագրելով 1671 թվականին կազմված Տոնացույցը, ավելացնում է. «Թէ՞ Ծահմիր և Ցակոբ նոյն անձն է, թէ՞ միւն արուեստաւորն և միւսն ստացողն, և թէ ի՞նչ նշանակէ երկու անուանց մէջ Մ. տառն, յաջողաց մնան ստուգելիք (Մահտեսի՞)...»[34]: Իսկ Հ. Քյուրտյանը գրում է. «Անմիջապէս ճշդեմ որ անուններուն մէջ գործածուած «Մ» համառօտագրութիւնն է «մահտեսի» պատուանուան կամ տիտղոսին որ ընդհանրապէս Երուսաղէմ այցելող մեր նախնիք, այր թէ կին, առհասարակ կը սիրէին գործածել: Ուրեմն բոլոր մեր այս յիշած Կեսարացի արծաթագործները այցելած էին Երուսաղէմ, որոնք կ'երեւայ թէ Սաղէմի մէջ յիշատակներ չեն թողուցած որ չեն յիշուիր Աղաւնունի Սրբազանի «Մինաբանք և Այցելուք» գործին մէջ: Դիտել տամ թէ 10դ յիշատակարանի մէջ (բարոնուհի Լանայի հավաքածու- Ա. Մ.) Մալխասին հաճի Կարապետ կը յիշուի արծաթագործը, որ իր միւս գործերուն մէջ կը յիշէ ինք յինքը իբր Մալխասին Մ. Կարապետ, այսպէս վերցնելով որեւէ կասկած թէ «Մ» կը նշանակէ մահտեսի կամ հաճի»[35]:

Ա. Ալպոյաճյանը գրում է. «...մեր ձեռքը գտնուած երեք նմանահանութիւնները ցոյց կու տան թէ ԺԷ. դարուն ոսկերչութիւնը խիստ զարգացած էր Կեսարիոյ մէջ ուր այնքան նրբարուեստ գործեր կրնային շինուիլ:

Հաւանօրէն այս արուեստը Կեսարիա փոխադրած էին Պարսկաստանէն եկող Հայերը, վասնզի ինչպէս յայտնի է Վանի, Դաւրէժի և մօտաւոր շրջաններու մէջ ոսկերչութիւնը, մանաւանդ արծաթագործութիւնը շատ զարգացած էր:

Մասնաւորապէս դիտել կու տամ թէ առ այս նշանակելի փաստ է վերոգրեալ երեք ծանօթ արծաթագործներուն, Մ. Ցակոբ Ծահմիրեանի, Մ. Կարապետ Մալխասեանի և Եղիա Ծահպազեանի մականունները պարսկական ծագումը որ կրնայ փաստ համարուիլ նաև իրենց նոյն տեղէն ծագմանը՝ կա՛մ ծննդեամբ և կա՛մ սերունդով:

---

[34] «Բազմավէպ», 1895, էջ 77:
[35] Հ. Քյուրտյան, էջ 58:

Ասոնք կա՛մ իրենք իսկ իրենց արհեստը փոխադրած են Կեսարիա կա՛մ իրենց հօրենական արհեստը զանկէ զանկ շարունակած»[36]:

Հ. Քյուրտյանը համակարծիք է. «Այս արծաթագործներուն անունները՝ Շահմիր, Շահպազ, Մալխաս, մեզի ալ ենթադրել կուտան որ ծագմամբ Պարսկահայ արծաթագործներ էին ասոնք՝ ԺԷ. դարուն սկիզբը Կեսարիա գաղթած: Ընդունելի է Ալպոյաճեանի տեսութիւնը...»: Նա գրում է. «Յիշատակարանները մեզի կուտան ոչ միայն արծաթ կազմերուն շինութեան վայրն ու թուականը, այլ նաեւ կուտան արծաթագործ վարպետներուն անունները: Ասոնցմէ կ'իմանանք թէ արծաթագործ Շահմիր Մ. Կարապետ կը գործէր 1653ին, իր որդին կամ եղբայրը ըլլալու է Շահմիրին Մ. Յակոբ արծաթագործը (1671ին): Մալխասի որդի Մ. Յակոբ (1656, 1660) արծաթագործը և իր կրտսեր եղբայրը Մալխասի որդի Մ. Կարապետ (1671, 1691 երկու տարբեր կազմեր) ծանօթ այս 12 կազմերէն հինգը իրենք շինած են: Իսկ Շահպազի որդի Մ. Գրիգոր (1661) և իր ըստ երեւոյթին կրտսեր եղբայրը Եղիան 1683ին կ'ամբողջացնեն անունները մեզի ծանօթ կազմարարներուն»[37]:

Այսպիսով, եթե ընդունենք Բ. Սարգիսյանի կարծիքը, այսինքն՝ արձանագրություններում հիշատակված անունները համարենք իբրև երկու տարբեր մարդկանց անուններ՝ կազմողի և ստացողի, ապա Մալխաս արծաթագործի պատրաստած՝ մեզ հայտնի կրկնակազմերն ընդգրկում են 1656 թ. (մեկ ձեռագիր), 1660 թ. (մեկ), 1670 թ. (մեկ), 1691 թ. (երեք), 1704 թ. (երկու ձեռագիր) ժամանակահատվածը: Այսինքն՝ ստեղծագործական ավելի քան հիսնամյա աշխատանք: 1656 և 1660 թվականների կրկնակազմերի վրա հիշատակվում է **Մալխասին Մ. Յակոբ** ձևով, 1670 թ.՝ **Մալխասին Մ. Օհանէս**, իսկ մնացած դեպքերում հիշատակվում է **Մալխասն** կամ **Մալխասին Մ. Կարապետ** կամ **Մ., Հաճի Կարապետին** ձևերով: Կարելի է ենթադրել, որ գրի համար քիչ տեղ ունենալով՝ արծաթագործը փորձել է ավելի հակիրճ ներկայացնել իր ասելիքը:

Այս ամենից եզրակացվում է, որ Մալխաս արծաթագործը 1656, 1660 թվականներին արծաթակազմերը պատրաստել է մահտեսի Հակոբի պատվերով, 1670-ին՝ մահտեսի Օհանեսի, 1691 թվականին՝ մահտեսի կամ հաճի Կարապետի, իսկ 1704 թվականին Մալխասը և մահտեսի Կարապետը միասին են պատրաստել ձեռագրերի արծաթակազմերը (տասնիններորդ և քսաներորդ ձեռագրեր), որոնց վրա հստակ նշված է միևնույն պատվիրատուի կամ ստացողի անունը՝ «Մուրատ որդի տէր Աբրահամին»: Մալխասի դեպքում որևէ խնդիր չկա:

Խնդիրը Շահմիրի դեպքում է: Շահմիր արծաթագործի պատրաստած՝ մեզ հայտնի կրկնակազմերն ընդգրկում են 1653 թ., 1671 թ., 1691 թ., 1741 թ. (մեկական ձեռագրեր) ժամանակահատվածը: 1653 թ. հիշատակվում է **Շահմիրին Մ. Կարապետ** ձևով, 1671ին՝ **Շահմիրին Մ. Յակոբ**, 1691ին՝ **Աստուածատուր Շահամիրին**, 1741ին՝ **Շահմիրին Մ. Յակոբ** ձևով: Այսինքն, Շահմիրը 1653 թ. կատարել է մահտեսի Կարապետի պատվերը, 1691 թ. Աստվածատուրի, իսկ 1671, 1741 թթ. մահտեսի Հակոբի պատվերները:

---

36 Ա. Ալպոյաճյան, էջ 1517:

37 Հ. Քյուրտյան, էջ 56:

Նկար 1. ՄՄ. ձեռ. 10411, արծաթագործ՝ «Մալխասին Մ. Կարապետ», 1704 թ.

Նկար 2. ՄՄ. ձեռ. 10356, Ա փեղկ, արծաթագործ՝ «Շահմիրին Մ. Ցակոբ», 1741 թ.

Նկար 9. ՄՄ. ձեռ. 10956, Բ փեղկ, արծաթագործ՝ «Շահմիրին Մ. Յակոբ», 1704 թ.

Ինչպես նկատում ենք, Շահմիրի ստեղծած կազմերի պատրաստման թվականներն են 1653, 1671, 1691 և 1741: Այսինքն՝ այս կազմերի միջև ընկած է 88 տարի ժամանակ: Մնում է ընդունել, որ Շահմիրը երկարակյաց է եղել և նվազագույնը 110 տարեկան հասակում պատրաստել է նման շքեղ արծաթակազմ, որ քիչ հավանական է, կամ էլ ընդունել նույնանուն երկու մարդու առկայությունը:

Խնդրին այս ձևով մոտենալու դեպքում չլուծված է մնում նաև 1656, 1671 և 1741 թվականներին հիշատակվող պատվիրատու Մ. Հակոբի խնդիրը. գուցե այս դեպքում էլ պետք է հավանական համարել նույնանուն երկու մարդու առկայությունը:

Եթե ընդունենք Բազմավեպի անանուն հեղինակի (Ղ. Ալիշանի), Հ. Տաշյանի, Ա. Ալպոյաճյանի, Հ. Քյուրտյանի և մյուսների տեսակետը, այսինքն՝ արձանա-

գրություններում հիշատակված արծաթագործներին համարենք մի մարդ՝ Մալխաս Մ. Յակոբ կամ Ծահմիր Մ. Յակոբ, այսինքն՝ Մալխաս և Ծահմիր տոհմերի արծաթագործների, ապա Մալխաս տոհմի արծաթագործների պատրաստած կազմերն ընդգրկում են 1656-1704 թվականների ժամանակահատվածը. Մալխաս Մ. Հակոբ արծաթագործը 1656, 1660 թվականներին կազմել է երկու ձեռագիր, Մալխաս Մ. Օհանէսը 1670-ին կազմել է մեկ ձեռագիր, նրա եղբայր Մալխաս Մ. կամ Հաճի Կարապետը 1691-1704 թվականներին կազմել է հինգ ձեռագիր (ինչպես նշել ենք, սրանցից միայն երկուսի՝ 1704 թվականին կազմած Սաղմոսարանի և Մաշտոցի կազմերի վրա է հիշատակված միևնույն ստացողի՝ Մուրատ որդի տեր Աբրահամի անունը):

Իսկ Ծահմիր տոհմի արծաթագործների պատրաստած կազմերն ընդգրկում են 1653-1741 թվականների ժամանակահատվածը. Ծահմիր Մ. Կարապետը 1653 թվականին կազմել է մեկ ձեռագիր, Աստուածատուր Ծահամիրը 1691 թ.՝ մեկ ձեռագիր, իսկ նրանց ազգական Ծահմիր Մ. Յակոբը 1671, 1741 թվականներին կազմել է երկու ձեռագիր: Մ. Հակոբ Ծահմիրի վերջին այս երկու ձեռագրերի միջև ընկած է 70 տարի ժամանակ: Ձեռքի տակ չունենալով 1671 թվականի կրկնակազմի լավորակ լուսանկար[38] և Ալպոյաճյանի ընթերցումը ստուգելու հնարավորություն՝ կարող ենք միայն ենթադրել, որ գուցե ավելի ճիշտ կլիներ թվականը կարդալ ՌՃՆ (1691). սա ավելի հավանական է, նկատի ունենալով նաև Վիեննայի Մխիթարյան հավաքածուի N° 416 ձեռագրի արծաթակազմի պատրաստման թվականի ՌՃՆ (1691)-ի ՌՃԻ (1671) ընթերցումը, միաժամանակ՝ Մաշտոցյան Մատենադարանի N° 10356 ձեռագրում հստակ է Ղ տառը՝ ՌՃՂ (1741):

Նկատենք նաև, որ հիշատակվող արծաթագործներից միայն 1691 թվագրված կրկնակազմի արձանագրությունում հիշատակվող Աստվածատուրը չունի մահտեսի տիտղոսը, և իրեն չի համարել արծաթագործ: Օգտագործելով կաղապարային նույն արտահայտությունները՝ Աստվածատուրը խմբագրել է այն հետևյալ ձևով. «Աւետարանս այս արեալ հալալ ընչիս իւր աղօթելու եւ գօհանալ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ զարդարեցի արծաթաւ ի թվն Հայոց ՌՃՆ (=1691) անարժան Աստուածատուր Ծահամիրին» և այլն: Այսինքն՝ եթե Աստվածատուրը մահտեսի լիներ, հնարավոր է արձանագրված լիներ որպես Ծահամիրին կամ Ծահմիրին Մ. Աստվածատուր ձևով: Աստվածատուր Ծահմիրին ձևը ենթադրել է տալիս, որ հիշատակված անունները կարելի է կարդալ նաև որպես Մ. Հակոբ Մալխասին, Մ. Կարապետ Ծահմիրին, կամ Մ. Հակոբ Ծահմիրին ձևերով (այսպես. «Գիրքս այս արեալ հալալ ընչիս իւր զարդարեցի արծաթաւ Կեսարիա քաղաքին անարժան ձեռօք արծաթագործ Մ. Յակոբ Ծահմիրին» և այլն):

Վերջապես կրկնակազմերից միայն երկուսի վրա է հստակ հիշատակված ստացողի անունը: Մնացած բոլոր արձանագրություններում հիշատակված են, մեր համոզմամբ, կազմարարների անունները՝ ըստ իրենց տոհմանունների:

---

38 Ա. Ալպոյաճյան, էջ 1515՝ լուսանկարը տպված է անհստակ, ուստի և դժվարանում ենք թվականը ճշգրիտ ընթերցել:

Այսպիսով, Կեսարիայում հիմնականում գործել են Մալխաս և Ծահմիր կամ Ծահամիր արծաթագործների տոհմերը, ինչպես նաև Ծահպազ տոհմից Մ. Գրիգոր (1661) և Եղիա (1683) արծաթագործները:

Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ Մալխաս և Ծահմիր տոհմերի կազմարարները, որոնց գործերից հասել են ոչ քիչ քանակով օրինակներ, ունեն Մ. Կարապետ և Մ. Հակոբ անունները (բացառենք Օհաննեսին և Աստվածատուրին, որոնք, ըստ թողած արձանագրությունների, կազմել են մեկական ձեռագիր):

Կազմարվեստի պատմության քննության ընթացքում իբրև օժանդակ նյութ պետք է անպայման նկատի ունենալ և օգտագործել եկեղեցական ծիսական իրերի (ոսկե և արծաթե անոթների, մասնատուփերի, վարագույրների, ծածկոցների և այլ տեսակի գործվածքների) արձանագրությունները, որոնք մեծապես նպաստելու են առաջացած խնդիրների լուծմանը:

ԱՐՄԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ